

0 1 2 3 4 5 6 7 8 9 A B C D E F G H I J K L M N O P Q R S T U V W X Y Z

ԶՈՅԳ ՅՈՒՆԵՍԿՈՒՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Դեկտեմբ. 25ին, հրեշտակներու Փառա-
 ի բարձուևսն հետ զուգուեցան Միաբա-
 նութեանս ալ զոհաբանական ջերմ իղձերն
 ու մաղթանքները, երկու պատկառելի
 Յորեւեարներու՝ Մեծ. Հ. Ղևոնդ Վրդ.
 Տայեանի, և Մեծ. Հ. Գարեգին Վրդ.
 Լազարեանի քահանայութեան ոսկեղէն
 յորեւեանին առիթով, հոգեկան մխիթա-
 րութեան պայծառ երկնքի մը տակ: Կէս
 դարու հսկայ մաստակ մը իրենց ուսին,
 քահանայական սրբութեամբ օծուն եւ
 սրբալոյս ճակատներով բարձրացան ա-
 նոնք սուրբ Խորան, և իրենց շուրջ մենք
 բոլորս, ինչպէս երբեմն Բեթղէհէմի ըն-
 ծայաբեր հովիւները Յիսուս Մանուկին
 ոտքերուն առջեւ, անմահ Գառին Սեղանին
 վրայ սփռեցինք սրտազին իղձերու թարմ
 եւ անուշակ վարդեր, անդամ մըն ալ օրհ-
 նելով յիշատակը անմահ Սեբաստացիին
 եւ անոր լուսաշող յաջորդներուն, որոնց
 չարքին՝ ահա՛ մեր զոյգ Յորեւեարները:

Արդարեւ կեանքը զոր վարած են անոնք՝ եղած է մշտատեւ զոհագործում մը ի սպաս հոգիներու փրկութեան եւ ազգային անկապտելի արժէքներու պայծառութեան, կրթական ու դաստիարակչական, դրական ու զեղարուեստական, տնտեսական ու մատակարարական ասպարէշներուն մէջ:

Թմբկաբերդի երգիչին պատգամը կը
յիշենք այս պահուս .

« Գործն է անմահ, լաւ իմացէք,
Որ խօսուամ է դարէ դար .
Երնէկ նըրան որ իր պործով
Կ'ապրի անվերջ, անդադար » :

Ձախագանցութիւն պիտի չըլլայ՝ եթէ
ըսենք որ մեր Յորեւեալներն ալ արդէն
իրենց գործով չահած են անմահութեան

դավինեպսակը : Ու մինչ յարդանքով կը մօտենանք իրենց բազմամեայ մլաստակին , ջերմագին իղձերով կը մաղթենք տակաւին երկայն ու արեւոյդ արշալոյսներ , կարմրերփեան վարդերու պսակներով զեղուն : Շնորհաւորական այս իղձերուն հետ՝ նուիրական պարտականութիւն մըն է մեզի համար , հակիրճ ակնարկ մը տալ իրենց կեանքին ու զործին վրայ , ներկայացնելով իբր քաջալերիչ ու խօսուէն օրինակներ ապագայ սերունդներուն :




Հայ Եկեղեցական երգի պատմութեան հետ կապուած է անդենը Մեծ. Հ. Դեռնոյ Վրդ. Տայեանի, որ իր քահանայական կեանքի ոսկեղէն արշալոյսին հետ ողջունեց նաեւ մեր սրբազան երաժշտութեան ի սպաս դբած՝ Երկարամեայ իր վաստակներուն արդիւնաւէտ հանդրուանը: Երբ մըն է եղած ինքնին կեանքը Մեծարդոյ Յորեկարին, երբ մը դոհարանական, ուղղուած միմիայն Աստուծոյ փառքին. երբ մը, որու մասնակից կ'ըլլան հիմա Կոնստնտնուլ քաղաքիւ ձեռասուն շաղկերտներ, հոգեպաւակներ, հայրենակիցներ. երբ մը վերջապէս, որ ծայր տուած այն սիրելի Պարտիզակէն, վը հնչէ այժմ Ս. Ղազարի մէջ, եւ պիտի հնչէ ընդմիշտ Հայ Եկեղեցւոյ անմահ զօրանջներով եւ հոգեպաւլ նուազներով:

1900-ի Մայիսեան վարդերուն հետ կը բացուի Երջանիկ արշալոյս մը՝ Պարտիզակցի սիւրբիկ Անտոնին սրտին մէջ, Ս. Ղազարի սոխակներու եւ սարեակներու զուարթ դայլայլիկներով։ Հաղիւ տաանեւ՝ հինգամեայ, կայտառ ու անմեղ պատանի մը, օթուած չատ պեղեցիկ ու սրտագրաւ

ճախնով, կը ճռուողէ Մխիթարի սուրբ յարկին տակ, Մեծն Ալիշանի չոնչով հրավառ: Երկու տարի վերջ կը զգենու սուրբ փիլոնը. եւ 1904ին, ուխտերով կ'անդամակցի Միաբանութեան: Այնուհետեւ յաջողութեամբ կը բոլորէ Եկեղեցական եւ ազգային ուսումնեբու ջրջանը, եւ 1906ին կ'ընդունի քահանայական սուրբ օծումը, Ուխտիս Ընդհ. Աբբահայր Գեբայ. Իդնատիոս Արքեպիսկ. Կիրեղեանի ձեռքէն:

Իսկոյն կը նուիրուի կրթական եւ զը-
րական ասպարէզին: Ու զինք կը տեսնէք
նախ իբր ուսուցիչ հայերէն լեզուի եւ եր-
բի՝ վանքի նորընծայարանին մէջ: Ծնըն-
դաւայրին տուած այցելութենէ՝ մը վերջ,
1909ին, (այդ շրջանին վ՛այցելէ նաեւ
Պոլիս) վերանորոգ կորովով կը լծուի իր
նախասիրած աշխատութիւններուն: 1911-
ին լոյս կը տեսնէ իր բանասիրական ան-
դրանիկ հատորը, Եղիշէի չորս յեղամակ-
նեքը հնագոյն գրչագրի մը մէջ, որ կը
ներկայացնէ համեմատութիւններ 1828ի
տպագրութեան Ե. Զ. Է. յեղանակնե-
րուն՝ 1224ի գրչագրի մը հետ, տալով
նաեւ ուրիշ եօթը հնագոյն տպագիր օրի-
նակներու տարբերակները եւ այլ հեղի-
նակաւոր լուսարանութիւններ, ընդամէնը
272 էջ:

[illegible]

Երբ իսկոյն ձայնադերու հայկական խաղերով, և ևս աւելի եւրոպական արդի ձայնադուլթեամբ: Օթուռած ալ արդէն ի բնէ շատ գեղեցիկ ձայնով եւ երգի մեծ սոսումով, հիանալիօրէն սերտած էր ու դարձած վարպետը բոլոր մեր շարականներուն, նաեւ անկէ դուրս գտնուած տաղերուն եւ մեղեդիներուն: Անվարան կըրնանք ըսել որ յիսուն եւ աւելի տարիներէ ի վեր, իր աշակերտութեան չընանէն, փայլն ու խանդն է դարձած մեծ տօներու եւ մանաւանդ Աւագ Շարթուան, Ծաղկաւարդի ու Զորահնէքի հոգեպարար արարողութիւններուն. տիրացած նաեւ երգի եւրոպական արուեստին, գիտէ տալ իր ոլորուն կոկորդին՝ նուրբ եւ յաղթական չեչոյ, խորհրդաւոր եւ ողբական բնոյթ, խանդ եւ եռանդ, ըստ պահանջին եւ բռնութեան: Գիտէ միեւնոյն երգին երեք կամ չորս եղանակները, գիտէ մինչեւ իսկ Տընտեսեանի կամ Թաշճեանի հրատարակութեանց տարբերակները՝ նոյն երգին, զորս կը ներկայացնէ ամենայն բնականութեամբ ու պարզութեամբ:

բուն: 1950ի Մայիսին դարձեալ Հոռմի մէջ, Սրբազան Երզնի Միջազգային Ա. Համաժողովին կը բերէ իր մասնակցութիւնը հմտալից բանախօսութեամբ մը: 1954ի Հոկտեմբերին կ'անցնի Վիեննա, մասնակցելու Սրբազան Երզնի Միջազգային Բ. Համաժողովին: 1956ին դարձեալ Վիեննա կը գտնենք զինքը, Մոցարդի ծննդեան 200ամեակին առթիւ կազմակերպուած Միջազգային Երաժշտութեան Համաժողովին, որու ընթացքին կը ներկայացնէ ամփոփ բայց հմտալից գեկոյց մը նկատմամբ քառորդ ձայներու դրութեան եւ դորժածութեան Հայ սրբազան երաժշտութեան մէջ. նիւթ մը, որ մեծ հետաքրքրութիւն կը ստեղծէ երաժշտագէտներու շրջանակին մէջ, եւ արժանի կը դառնայ մասնաւոր գնահատանքի՝ Վիեննայի Պետական Երաժշտանոցի Տեսուչին եւ այլ մեծամեծներու կողմէ: Այսպէս Հ. Ղ. Տայեան ոչ միայն մասնակցեալ եւ ուսումնասիրող է Հայ սրբազան երգին, այլ նաեւ անոր մեծագոյն ներկայացուցիչը եւ զայն ծանօթացնողը եւրոպական գեղարուեստի շրջանակներուն մէջ:

Բացի չարականներէն, Հ. Ղեւոնդ Վրդ. չարադրած է բազմաթիւ երգեր եւս, գանազան առիթներով: Յիշատակելի է իր Պատարագը, քաղուած Ս. Ղազարու աւանդական եղանակներէն, եռաձայն եւ քառաձայն. Ով անմահ, քահանայական ձեռնադրութեան նուիրուած քնքուշ տաղը, քառաձայն խառն խումբի համար: Ունի նաեւ Աստուածամօր նուիրուած քանի մը տասնեակ սիրուն երգեր, հայրենաշունչ եղանակներ, նուիրուած Հ. Ալիշանի, Նարեկացիին, ինչպէս նաեւ քայլերգներ, միաձայն կամ բազմաձայն: Երգի վերածած է Հ. Ալիշանի Հայոց աշխարհիկը, Հայ հանգիստը, Եւրոպայի, Եւրոպայի, Եւրոպայի...: Ասոնք բոլորը անշուշտ օր մը պիտի տեսնենք գեղեցիկ հատորի մը մէջ ամփոփուած. առայդ կրկնելով մեր մաղթանքները երջանիկ ու երկար օրերու, կը հայցենք երկրնքէն առողջութիւն եւ յարատեւութիւն իր բոլոր զործերուն:

* * *

Ախլցիսան է ծննդավայրը երկրորդ Յոռմիէն, Հօր, Վ. Հ. Գարեգին Վրդ. Լազարեանի, որ իր աչքերը բացած է 1885ի Մայիսեան առաւօտ մը, Կովկասեան լեռներէն իջնող հոգեպարար սիւքին հետ: Հայրենի հողին ու ջուրին զիւթական կենսունակութեամբ աճած, առօրէի ու կորովի, հազիւ տասնեւհորսամեայ փոքրիկ Մեղիսը կը կտրէ հսկայ աշխարհներ՝ զինուորադրուելու համար Միւթարեան դրօշին տակ (1899, Յունիս 5): Վանականի սեւ պարեգօտին ներքեւ կը պահէ վեհ ու հզօր շունչը մայր երկրին, խանդավառ վարումով անոր հայրենի բոլոր սրբութիւններուն:

Այնուհետեւ, մինչեւ քահանայութիւն, իր վերելքի աստիճաններուն վրայ կ'ունենայ ընկեր եւ հոգեկից Մեծ. Հ. Ղեւոնդ Վրդ. Տայեանը:

1906ին, հազիւ ձեռնադրուած, խիղճի փոխ-Մեծաւորի պաշտօնով կը նուիրուի վանքի փոքրիկ ընծայացուներու դաստիարակութեան: Վեց տարի անընդհատ, անձնանուէր զոհողութիւններով կ'աշխատի դրոշմել իր խնամքին յանձնուած փոքրիկներուն մէջ՝ երկիւղած բարեպաշտութեան հետ, նաեւ անսահման սէր մը հայրենիքին: Այս շրջանին է որ կը նուիրուի ուսումնական ինքնադարձացումի, խորանալով յատկապէս գերմաներէնի եւ յունարէնի մէջ, հայ բանասիրական մարդկութեան խիստ երազով:

Միաժամանակ ցոյց կու տայ տնտեսագիտական ու մատակարարական ընդունակութիւն եւ նկատելի ձեւեր. ու Մեծաւորները այդ ուղղութեամբ կ'ուղարկեն զինքը դանազան պաշտօնավայրեր: Այնուհետեւ իր ասպարէզը կ'ըլլան երկու դաշտերը՝ կրթական - դաստիարակչական, տնտեսա-մատակարարական:

1912ին զինք պահ մը կը գտնենք իր հայրենի լեռներուն ստորոտը. ապա իսկոյն Տրապիզոնի Միւթարեան վարժարանին մէջ՝ մատակարարի եւ ուսուցչի պաշտօնով: 1912-14ի շրջանին՝ Պոլսոյ

մէջ, Քաղկեդոնի Միւթարեան վարժարանի կամարներուն տակ:

1914-18 թուականները՝ կարմիր արձանագրուած են Հ. Գարեգին Վրդ. ի յուշամատենին մէջ. հարիւրաւոր հայրենակիցներու հետ՝ աքսորական դէպի Էնկլարի եւ Օսմանիստ. Ժամանակ մը մինչեւ իսկ բանտարկուած: Թէեւ շուտով կ'ազատի արգելափակումէ, սակայն ինքնայօժար կ'ընկերակցի իր աքսորակից ընկերներուն, մինչեւ ազատադրութեան օրերը (Պրեսթ Լիթմօսքի ժողովով), հարազատ հօր մը պէս հողալով անոնց բոլոր հոգեւոր ու նոյնիսկ նիւթական պէտքերը, միւթար ու քաջալերիչ հրեշտակի մը պէս հսկելով անոնց սեւ բարձերուն վրայ:


1918-19ին դարձեալ մայրավանքին մէջ է, ընծայացուներու իրր դաստիարակ: 1919-1922ին կը պաշտօնավարէ Մուրատ-Ռափայէլեան վարժարանին մէջ, իրր ուսուցիչ ու դորժակալ-մատակարար: 1922-ին պահ մը կ'անցնի Պոլսոյ: Եւ ապա դարձեալ Մուրատ-Ռափայէլեան, մինչեւ 1924: 1924-27 կը պաշտօնավարէ Մուրատ-Ռափայէլեանի կալուածներուն վրայ, Torre di Zuinoի մէջ Թրիեստի մօտերը, եւ յաջորդաբար նաեւ 1932-36:

1928-32ի շրջանին կը գտնուի Միլան, իրր Տեսուչ՝ Համալսարանական Ուսանողներու Միւթարեան Տան:

1936-1942ին կը վարէ Մուրատ-Ռափ. վարժարանի տեսչութիւնը, մեծ ձեռնհասութեամբ, սիրունելով անխտիր իր բոլոր աշակերտներէն, իրրեւ հայր եւ սիրելի դաստիարակ: Խոր է տպաւորութիւնը, զոր ան կը թողու իր սաներուն մէջ, վառելով հոն ճշմարիտ ու անկեղծ հայրենասիրութեան կայծեր:

1946-52ին իրր Ընդհ. Առաջիկայ, իր փորձառու եւ օգտաշատ խորհուրդներով կը գործակցի Միւթարեան վարժարանի մարմինին:

Այնուհետեւ, յետ լուսահոգիի Հ. Թեոֆիլ մահուան, կը ստանձնէ անոր դրոշմի մահուան, կը ստանձնէ անոր դրոշմի մահուան, կը ստանձնէ անոր դրոշմի մահուան:



կալուածներուն վրայ: Եւ անմահ ձեռնհասութեամբ կը յաջողի քիչ ատենուան մէջ չնցնել իր խնամքին յանձնուած երկիրները, ջրարգել թուրքեր կառուցանելով, ճահիճներ չորցնելով եւ ուրիշ շինարար ձեռնարկներով:

Անընդհատ զոհողութեան կեանք մըն է՝ զոր կը վարէ տակաւին անխոնջ տոկոսնութեամբ մեր սիրելի Յորեկարը: Կեանք մը որ համակ սպառում է եւ նուիրում՝ իր հոգեկից եւ կրօնակիցներուն ի սպաս: Ու մինչ երախտադիտութեամբ կ'արձանագրենք այս տողերը, կը նշմարենք այն զոհունակ ժպիտը, հոգ չէ թէ շուքի մէջ թեւասքող, որով կը հրճուի իր աննախանձ սիրտը ի տես իր եղբայրակիցներու բիւր յաջողութիւններուն: Յաջողութիւններ՝ որոնց բոլորին արդիւնքը կ'իստովին իրենն է անպայման:

Քաղաքը որ լերան վրայ շինուած է՝ չի կրնար ծածուկ մնալ: Անշուշտ պիտի

չվիրաւորենք Մեծարդոյ Հօր համեստութիւնը՝ եթէ այդ լեռնակառոյց քաղաքին նմանցնենք իր կեանքն ու դործը, բարձր՝ կովկասի ձիւնակուտակ դադաթնեւուն նման, ուր կը ծածանի ամբիժ դրօշը եղբայրսիրութեան: Եւ սակայն եթէ հոն ալ բարձրանանք, պիտի չկարենանք դռնել զինքը. ինք անպայման ծածկուած պիտի ըլլայ դղեակին ներքին մէկ դադանի անկիւնը, իր խոկումներուն, իր ծրարիւններուն եւ իր աղօթքներուն մէջ ընկղմած:

Բայց վստահ ենք թէ երկրաւոր Հայրը, որ ծածուկն ալ կը տեսնէ, եւ գլխաւորապէս այդ ծածուկ դործերը կը զնահատէ, յայտնապէս պիտի վարձատրէ իր հաւատարիմ մատակարարը եւ խմստուն ծառան:

Մենք տակաւին երկար ու երջանիկ դարուններ կը մաղթենք իրեն, ալեղա՛րդ դարուններ, անմեղունակ շուշաններով ծաղկեպտակ, միշտ աւելի պայծառացնելու համար Միաբանութիւնը, եւ անով՝ Եկեղեցին եւ բոլոր Ազգը:

★★★

Յորեկանին առիթով՝ շնորհաւորական բաղձաթիւ նամակներ ու հեռագիրներ կը փութային յարգանքով զնահատել երկու վաստակաւոր Հայրերուն քահանայական յիսնամեայ զործունէութիւնը: Սրբազան

Քահանայապետը կը զրկէր իր օրհնութիւնը՝ իւրաքանչիւրին առանձին թուղթերով. Հոռի Արեւելեան Ժողովի քարտուղար՝ Ծիր. Թխսըրան կը փութար զնահատական գեղեցիկ տողերով, նմանապէս վսեմ. Հոգեւոր Տէրը Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան Ծիրանաւոր՝ Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ, Գերպո՛. Պետրոս Արքեպս. Քէտիճեան՝ տիտղ. Կոդոնիոյ Հայոց, Ուխտիս Ընդհ. Արքահայրը՝ հեռաւոր Քալիֆոռնիայէն, Մխիթարեան հաստատութիւններու Հայրերը, Իտալիոյ Հայոց Գաղութային եւ Մշակութային Միութեանց Վարչութիւնները, Մխիթ. նախկին սաներու Միութիւնները՝ Մարտէյլէն ու Փարիզէն, Սեւրի Մուրատեան վարժարանի աշակերտներու ծնողաց Միութիւնը, եւ այլ բաղձաթիւ բարեկամներ, ծանօթներ, սաներ, հեռուէն ու մօտէն:

Այս երջանիկ յիշատակը անմահացնելու նպատակով՝ լոյս տեսաւ վաճառքի տրդարանէն Առաքել Սիւնեցիի «Դրախտագիրք»ը, որ կու գայ հարստացնել մեր նախնեաց զործերու ոսկեղէն շղթան: Հատորիկը, քննական հրատարակութիւնն է միջնադարեան մեր բանաստեղծին մէկ երկարաշունչ քերթուածին, լի անդենական կեանքի մասին հետաքրքրական գիտելիքներով՝ բանաստեղծական զգեստաւորութիւնով:

ԽՄԲ.

1955 - 1956

ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ՀՈՒՆՁՔԸ

ՄՈՒՐՈՏ - ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ



Ա. կարգ (նստած) ձախէն աջ
 Հ. ԲԱՐՍԵՂ ՎՐԴ. ԶԷՓԻՋԵԱՆ (Մատակարար եւ ուսուցիչ)
 Հ. ԵՂԻԱ ՎՐԴ. ՓԷՋԻԿԵԱՆ (Տեսուչ)
 Հ. ՍԱՀԱԿ ՎՐԴ. ՏԷՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ (Ուսուցիչ)
 Հ. ՅՈՎՍԷՓ ՊԵՇԵՆԷԼԵԱՆ (Ուսումնասէտ)

Բ. կարգ (տղեր) ձախէն աջ
 ԱԼԵԿՍԱՆ ԴԱՆԷԼԵԱՆ (Յունաստանէն)
 ԳԵՈՐԳ ՎԱՐԴԱՆԵԱՆ (Հայկազն)
 ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԷՓԻՋԵԱՆ (Մարտիրոսայէն)
 ՅԱԿՈԲ ՃԵԼԱԼԵԱՆ (Աթէնքէն)

Ահա յետ-պատերազմեան շրջանի երրորդ հունձքը, առողջ ու խոտովմաշուից՝ որ թեւակոխեց կեանքի սեմը, փայլուն ապագայի հարուստ երազներով: Վստահ ենք թէ պիտի իրականացնեն յոյսերը բոլորին, եւ հայութեան ցրուած բեկորներուն մէջ պիտի արծարծեն ազգային ոգին, եւ բարձր պահեն զազաւարական դրօշը:

միութեան եւ համերաշխ սիրոյ զործունէութեան դաշտին մէջ:

Առ այդ կը մաղթենք նոր կեանքի երջանիկ արշալոյսին հետ, առկայծումը զարոցական շրջանէն ամբարած գեղեցիկ սկզբունքներուն, կրօնքի եւ հայրենիքի սիրով աուլցուն:
